ეროვნული სასწავლო ოლიმპიადა

ისტორია

(სომხურ ენაზე)

II ტური

X-XII კლასები

2025-2026 სასწავლო წელი

Հրահանգ 1-3 առաջադրանքների համար. *Համապատասխանեցրե՛ք երկու սյունակներում տրված տեղեկությունները: Յուրաքանչյուր առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 4:*

1. **Որոշե՛ք համապատասխանությունը «Քարթլիի կյանք»-ում առկա տեղեկատվության և կոնկրետ վրացի ֆեոդալի միջև, որին վերաբերում է այդ տեղեկատվությունը.**

A	«Եվ նա […] զորեղ էր, անվեհեր ռազմիկ մարտի դաշտում, քաջարի հեծյալ և որսորդության մեջ վարպետ նշանաձիգ, ծանրախոհ, հողերի, եկեղեցիների և վանքերի կերտող և աստվածասեր մարդկանց նկատմամբ հարգանքով վերաբերվող, աղոթավոր, նա թույլ չէր տալիս իրեն բացակայել նախալուսածագի եկեղեցական արարողություններից, պատարագներից և երեկոյան ժամերգություններից՝ համաձայն Տիպիկոնի: Նա գրավեց […] երկիրը՝ Տասիսկարիից մինչև Կարնո քաղաք, Սամցխեն, Աճարան, Շավշեթին, Կլարջեթին և Տաոյի մեծ մասը, Վաշլովանին, Նիգալիսխևին, Արտանուջը, տասներկու անապատները, Կոլան, Կարնիփորան և երկու Արդահանը, ինչպես նաև Ջավախեթիի բազմաթիվ բնակավայրեր: Եվ այսպես նա օրեցօր աճում էր, ծառայում էր Աբաղա խանին և ենթարկվում Դիմիտրի թագավորին»:	**1**	Զաքարիա Մխարգրձելի (Երկայնաբազուկ)
B	«Եվ […] հենց այդտեղ մեծամասնությունը բռնեց նրան, իսկ Գառնիի ժայռերում թաքնված Իվանեն սպանվեց վերևից նետված քարով: Եվ […] նրան ներկայացրին սուլթան Ջալալ ադ Դինին: Նախիջևանցիներն ու ատրպատականցիները ճանաչեցին նրան և պատմեցին սուլթանին նրա քաջության և ռազմական սխրագործությունների մասին: Եվ նա նրան չենթարկեց մահապատժի, այլ բարձր գնահատեց ու քաղաքներ	**2**	Իոանե Մարուշիսձե

	շնորհեց Ատրպատականում և մեծարեց իր ազնվականներին համահավասար: Սակայն մեկ տարի անց նրան մահապատժի ենթարկեցին կրոնը փոխելուց հրաժարվելու համար»:		
C	«Վրա հասավ վիշտը, մահացավ […] մի շատ հարուստ, առաքինությամբ լեցուն, բարգավաճող ամեն ինչում, քաջարի և զորեղ զինվոր՝ Լոռու մարզի կառավարիչը: Նրա մահը ողբաց թագուհին, և նրա հետ՝ Վրաստանի բոլոր բնակիչները, քանի որ այն ժամանակներում հազվադեպ էին հանդիպում նման քաջակորով մարդիկ: Ասես նրա ծագումը ևս նպաստում էր դրան. նա Արտաքսերքսեսի հետնորդն էր: Հավատքով հայ լինելով նա լի էր բոլոր առաքինություններով՝ ինչպես աստվածային, այնպես էլ մարդկային»:	3	Ցոտնե Դադիանի
D	«Այնուհետև եկան կախեթցիները և պաշարեցին Ուփլիսցիխեն: Քարթլիի էրիսթավին այն ժամանակ […]՝ զորեղ մարդ, բազմաթիվ հպատակներով: Նա սուրհանդակ ուղարկեց Դավիթ Կյուրոպաղատի մոտ՝ առաջարկելով իր զորքերով արշավել, գրավել Քարթլին և տիրել այն կամ հանձնել Բագրատին՝ Գուրգենի որդուն, Աբխազների թագավոր Գեորգիի դստեր որդուն, որին պատկանում էին Աբխազիան և Քարթլին […] Նա ցանկացավ նաև Բագրատին դարձնել Աբխազիայի թագավոր: Եվ նրա հետ միասին Աբխազիայի և Քարթլիի բոլոր մեծամեծները, էրիսթավները և ազնաուրները Դավիթ Կյուրոպաղատին խնդրեցին թագավոր դարձնել Բագրատին»:	4	Շալվա Ախալցիխելի
		5	Բեքա Ջաղելի
		6	Իվանե Օրբելի

2. Որոշե՛ք համապատասխանությունը պատմական երկի և դրա հեղինակի միջև.

	Պատմական երկ		**Հեղինակ**
A	Ճանապարհով գնում էր մարդը	**1**	Կոնստանտինե Լորթքիփանիձե
B	Մացի Խվիտիա	**2**	Օթար Ճիլաձե
C	Հակի Աձբա	**3**	Լևան Գոթուա
D	Հերոսների վիշտը	**4**	Միխեիլ Ջավախիշվիլի
		5	Անտոն Փուրցելաձե
		6	Լեո Քիաչելի

3. Որոշե՛ք համապատասխանությունը ճանապարհորդի և նրա դիմանկարի միջև:

A		1	Ֆեռնան Մագելան
B		2	Էնրիկե Ծովագնաց

C		3	Ջեյմս Կուկ
D		4	Քրիստափոր Կոլումբոս
		5	Վասկո դա Գամա
		6	Ֆրենսիս Դրեյք

<u>Հրահանգ 4-րդ առաջադրանքի համար.</u> *Ձեր առջև է առաջադրանքի պայմանը: Ուշադիր ընթերցեք այն և ըստ առաջարկված հարցերի ստորև ներկայացված թեմայի վերաբերյալ ձևակերպե՛ք ձեր տեսակետները և փաստարկները:*

- ***Ձեր կարծիքը ձևակերպեք պարզ, հստակ և հիմնավորված: Դատողությունը պետք է լինի տրամաբանորեն ճիշտ:***
- ***Ձեր գրավորը չի ստուգվի, եթե տրված առաջադրանքն ամբողջությամբ ընկալված է ոչ պատշաճ կերպով կամ լեզվական առումով այնքան սխալներ է պարունակում, որ դժվար է հասկանալ միտքը:***

Առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 6:

4. 1632 թվականին շահը Խոսրո Միրզային նշանակեց Քարթլիի կառավարիչ:

Հարցեր.

(1) 4.1. Ո՞վ էր Իրանի շահն այդ ժամանակ:

(1) 4.2. Ի՞նչ այլ անունով է հայտնի Խոսրո Միրզան Վրաստանի պատմության մեջ:

(1) 4.3. Ձեր կարծիքով՝ Վրաստանում ո՞ւմ համար ունեցավ բացասական հետևանքներ Խոսրո Միրզայի գործունեությունը: Բերե՛ք ձեր կարծիքը հիմնավորող փաստարկ:

(1) 4.4. Ձեր կարծիքով՝ Վրաստանում ո՞ւմ համար ունեցավ դրական արդյունքներ Խոսրո Միրզայի գործունեությունը: Բերե՛ք ձեր կարծիքը հիմնավորող փաստարկ:

(2) 4.5. Անվանե՛ք Վրաստանում գործունեություն ծավալող որևէ վրացի կամ օտարերկրացի, որը եղել է Խոսրո Միրզայի նման կառավարիչ: Բերե՛ք երկու փաստարկ՝ այս նմանությունը հաստատելու համար:

<u>Հրահանգ 5-րդ առաջադրանքի համար.</u> *Ուշադիր ընթերցեք պատմական փաստաթուղթը և պատասխանե՛ք հարցերին: Առաջադրանքի գնահատման առավելագույն միավորն է՝ 12:*

Մարկո Պոլո - «Աշխարհի նկարագրությունը. Հրաշքների գիրքը»

Վրացիներն ունեն թագավոր, որին միշտ Դավիթ Մելիք են անվանում, ինչը ֆրանսերեն նշանակում է Դավիթ թագավոր: Նա թաթարների հպատակն է: Հին ժամանակներից ի վեր այս նահանգում ծնված յուրաքանչյուր թագավորի աջ ուսի տակ արծվի նշան է հայտնվում: Վրացիները գեղեցիկ ժողովուրդ են, հիանալի նետաձիգներ են և խիզախ են մարտի դաշտում: Նրանք քրիստոնյա են և հետևում են հունական օրենքին: Մազերը կարճ են կտրում, ինչպես մեր հոգևորականները:

Սա այն նահանգն է, որով Ալեքսանդրին չհաջողվեց անցնել, քանի որ այն մի կողմից սահմանակից է ծովին, իսկ մյուս կողմից՝ լեռներին: Այս կողմից այնքան նեղ արահետ է, որ անհնար է անցնել ձիով: Այս նեղ ճանապարհը ավելի քան տասներկու մղոն երկարություն ունի, այնպես որ աշխարհում քչերը կարող են անցնել դրանով. հետևաբար Ալեքսանդրին ևս չհաջողվեց: Այստեղ Ալեքսանդրը աշտարակ և մեծ բերդ-ամրոց կառուցեց, որպեսզի նրանք (վրացիները) չկարողանային անցնել և հարձակվել: Այն կոչվում է Երկաթե դարպաս: Այս վայրը հիշատակվում է Ալեքսանդրի գրքում, որտեղ ասվում է, որ նա թաթարներին շրջափակել է լեռներում: Սակայն դրանք ոչ թե թաթարներ էին, այլ կումաններ կոչվող ժողովուրդ, և նրանք բոլորովին այլ ցեղ են, քանի որ թաթարներն այդ ժամանակ ընդհանրապես գոյություն չունեին:

Այս նահանգում ուռենու անտառներ են: Վրացիներն ունեն հիանալի ամրացված քաղաքներ: Նրանք ամենամաքուր մետաքսից պատրաստում են աշխարհի լավագույն ոսկեզօծ գործվածքները: Այստեղ բնակվում են աշխարհի լավագույն ճուռակները: Տեղանքն առատ է բոլոր տեսակի սննդամթերքներով: Ամբողջ նահանգը պատված է մեծ լեռներով: Այնպես որ, թաթարները չկարողացան այն ամբողջությամբ նվաճել:

Հարցեր.

(1) 5.1. Ըստ Ձեզ՝ ինչո՞ւ է հեղինակը ենթադրել, որ վրացիները միշտ իրենց թագավորներին Դավիթ են կոչել:

(2) 5.2. Ո՞ւմ նկատի ունի հեղինակը «թաթարներ» ասելով, և ինչո՞ւ թաթարները չկարողացան ամբողջությամբ նվաճել Վրաստանը:

(1) 5.3. Վրացիների ո՞ր մարտական հատկանիշներն է հիշատակում Մարկո Պոլոն:

(1) 5.4. Ի՞նչ նկատի ունի հեղինակը, երբ վրացիներին ներկայացնում է որպես «հունական օրենքի» հետևորդներ:

(1) 5.5. Համաձայն տեքստի՝ ինչպե՞ս է հեղինակը բնութագրում Վրաստանի լանդշաֆտը և աշխարհագրական պայմանները:

(2) 5.6. Ո՞վ է նկատի առնվում տեքստում հիշատակված Ալեքսանդրի տակ, և ինչո՞ւ նա չկարողացավ անցնել Վրաստան:

(2) 5.7. Ո՞ր լեգենդն է կապված տեքստում հիշատակված Ալեքսանդրի կողմից «Երկաթե դարպասի» կառուցման հետ և որտե՞ղ է գտնվում այդ վայրն այսօր:

(1) 5.8. Աղբյուրի ո՞ր տեղեկություններն են հաղորդում Վրաստանում առևտրի զարգացման մասին:

(1) 5.9. Վրաստանի ո՞ր դարի իրադարձություններն է ներկայացնում Մարկո Պոլոն: Հիմնավորե՛ք ձեր պատասխանը՝ հիմնվելով տեքստում տրված տեղեկատվության վրա: